

ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ՍԵՅՄԻ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹՅՈՒՆԸ (1918 Թ. ՓԵՏՐՎԱՐ-ՄԱՅԻՍ)

Վահան Մելիքյան

1918 թ. հունվարին նորաստեղծ բոլշևիկյան իշխանությունը ցրեց Համառուսաստանյան Սահմանադիր ժողովը, ինչով վերջնականապես ավարտվեց Ռուսաստանի ժողովրդավարական զարգացման հնարավոր գործընթացը:

Խորհրդային իշխանությունը չճանաչող Անդրկովկասի կոմիսարիատը, երկրամասը բոլշևիկյան Ռուսաստանից անջատելու ճանապարհին և հատկապես, ընդգծելով այն հանգամանքը, որ Անդրկովկասը հավատարիմ է Փետրվարյան հեղափոխության ժողովրդավարական արժեքներին, այն նույն՝ Համառուսաստանյան Սահմանադիր ժողովին Անդրկովկասից ընտրված պատգամավորներից ձևավորվեց բազմակուսակցական խորհրդարան՝ Սեյմ: Այն գործեց 1918 թ. փետրվարի 10-ից մինչև մայիսի 26-ը և այդ ընթացքում փորձեց իրականացնել որոշ ժողովրդական միջոցառումներ, այդ թվում և օրենսդրական գործունեություն:

Չնայած Անդրկովկասյան Սեյմի ընդունած հավակնոտ ծրագրին, Անդրկովկասի իշխանություններն այնուամենայնիվ հնարավորություն ունեցան 1918 թ. մարտ-ապրիլ ամիսների ընթացքում քննարկել և լուծում տալ մի քանի կենսական խնդիրների:

Այդ շարքում կարևորվում է հողային հարցի նկատմամբ մոտեցումը:

Մարտի 15-ին, Սեյմի 15-րդ նիստում ընդունվեց օրենք՝ «Հողատերերին հատկացվող հողի չափի որոշման և հողային ռեֆորմի իրականացման միջոցների մասին»¹: Այնտեղ հիմնականում ասվում էր, որ ներկա օրենքը նպատակ է հետապնդում լրացնել և զարգացնել Կոմիսարիատի 1917 թ. դեկտեմբերի 16-ի հայտնի կանոնադրությունը, ուստի և որոշում է.

1. Բոլոր մասնավոր սեփականատիրական հողերը բռնագրավվում են անվարձահատույց կերպով և փոխանցվում հողային ֆոնդին, որոնք պատկանում են անդրկովկասյան երկրամասային և նահանգային

¹ Ст'у Закавказский Сейм, Стенографический отчет, Тифлис, 1918, заседание 15-ое, 15 марта, с. 51-53:

(շրջանային, գավառային) հողային կոմիտեներին:

2. Բռնագրավվող կալվածքի տիրոջը հատկացվող հողի չափը որոշվում է. ա) 7 դեսյատին, եթե բռնագրավվող կալվածքը գտնվում է շրջանում, որտեղ մշակվում են արժեքավոր կուլտուրաներ, բ) Տասնհինգ դեսյատին՝ հացահատիկային տնտեսության շրջանում, գ) քառասուն դեսյատին – անասնապահական տնտեսությունների համար:

9 կետից բաղկացած օրենքը չեղյալ էր համարում Կոմիսարիատի դեկտեմբերի 16-ի կանոնադրությունը և չկատարելու, չենթարկվելու դեպքում սահմանում համապատասխան պատիժներ¹:

1918 թ. Թիֆլիսում լույս տեսած «Անդրկովկասյան կառավարության հողային օրենքները» գրքույկը որոշ առումով լրացնում և մանրամասնում էր վերոհիշյալ օրենքը: Նախ՝ որպես Հողային օրենքի ընդունման օր է հիշատակվում մարտի 7-ը, ապա և, պարզվում է, որ սահմանափակվում և աստիճանական վերացման են ենթարկվում խիզանությունները, ըստ որի նրանց իրավասությանը հատկացվում էր 2-րդ հողվածին համապատասխան հողաչափ²: Սեյմի մարտի 13-ի նիստում, Դ. Օնիաշվիլին հայտնում էր ներկաներին, թե «ցավոք մեզ հասնում են տխուր լուրեր անարխիայի մասին... բոլորիս հայտնի են պատճառները և ինչ ուժեր են սնում այդ անարխիան: Ես կնշեմ միայն, որ ագրարային օրենքը մահացու հարված է հասցրել Կովկասյան բնակչության իշխող խավերի շահերին»: Բեկական-կալվածատիրական պատգամավորների բարձրացրած աղմուկի պատճառով նրա ելույթը ընդհատվում է³:

1918 թ. մայիսի 2 (15)-ին Սեյմը մի վերջին անգամ վերադառնում է ագրարային հարցին: 26-րդ նիստում լսվում է ագրարային հանձնաժողովի զեկույցը՝ ա) հողագործության նախարարության որոշ հաստատությունների վերացման օրինագծի մասին և բ) Անդրկովկասյան Կոմիսարիատի 1917 թ. դեկտեմբերի 16-ի կանոնադրության ու Սեյմի մարտի 7-ի օրենքի մեջ լրացումներ կատարելու մասին: Ջեկուցողը Սեյմի անդամ ս.-դ. մենշևիկ Դ. Օնիաշվիլին էր, որը Սեյմին է ներկայացնում «Հողագործության նախարարության գծով որոշ հաստատությունների վերացման մասին օրենքի նախագիծը»՝ կազմված 6 կետից. 1. 1918 թ. մարտի 1-ից

¹ Տե՛ս նույն տեղում, էջ 53:

² Տե՛ս Земельные законы Закавказского правительства, Тифлис, 1918, с. 2.

³ Տե՛ս Закавказский Сейм, Заседание 17-ое, 13-го марта, с. 43.

վերացնել. Կովկասյան վերաբնակեցման (հողահատկացնող) ջրկատր, Անդրկովկասյան (поземельно-устроительный) հողատեղավորման ջրկատր և այլն: Ուշագրավ է, որ որպես օրենսդրական հիմք էին ընդունվում 1883 թ. ապրիլի 26-ի, 1917 թ. հունիսի 29-ի Ժամանակավոր կառավարության համապատասխան որոշումները¹:

Մյուս կարևորագույն հիմնահարցը վերաբերում էր երկրամասի ֆինանսական ճգնաժամին և Անդրկովկասյան դրամանիշների խնդրին:

Ինչպես հայտնի է, Հոկտեմբերյան հեղաշրջումից հետո, ռուսական լայնածավալ պետության տարբեր մասերում ստեղծվեցին ինքնուրույն, միմյանց հետ կապ չունեցող դրամանիշներ, որոնք չունենալով իրական ոչ մի ապահովություն, իրենցից ներկայացնում էին սոսկ թղթադրամներ: Անդրկովկասում տեղական դրամանիշների տպագրության նախաձեռնությունը պատկանում էր Անդրկովկասյան կոմիսարիատին, որը 1918 թ. հունվարի 29-ին ընդունեց բռնների մասին կանոնադրությունը:

Սակայն, ՀՀ ֆինանսների ապագա նախարար Գրիգոր Զաղեթյանի կարծիքով, առաջինը փաստորեն երևան էին եկել Բաքվի Քաղաքային վարչության դրամանիշները՝ 1918 թ. հունվարի 19-ին: Դրանք ունեին տեղական նշանակություն և փետրվարի 4-ից՝ շրջանառության մեջ մտած «Անդրկովկասյան կոմիսարիատի բռնների» կողքին չէին կարող վճռական դեր խաղալ երկրամասի դրամական շրջանառության գործընթացում²: Այս հարցում նկատելի շրջադարձ նկատվեց Սեյմի ձևավորմամբ, երբ արագացան Ռուսաստանից անջատվելու տրամադրությունները:

Փետրվարի 22-ի Սեյմի 9-րդ նիստում զեկուցում է ողջ գործընթացի հեղինակ Խ. Կարճիկյանը: Կանգ առնելով ֆինանսական ճգնաժամի պատճառների վրա, նա նշում էր, որ բռնների թողարկումից հետո անգամ դրությունը չի բարելավվում: Մշակվել էին հարկային բնույթի նոր օրինագծեր, որոնք ևս կյանքի չէին կոչվել: Նրա կարծիքով, անգամ փետրվարի 6-ից շրջանառության մեջ մտած բռնները չփրկեցին դրությունը, քանի որ նախ՝ դրանց սահմանափակ քանակը, ապա և այդ դրամանիշների բնույթը, խոսում էին այն մասին, որ դա այն հուսալի ու բացառիկ աղբյու-

¹ Տե՛ս Закавказский Сейм, Заседание 26-ое, 2 мая, с. 1-3.

* Խ. Կարճիկյանը նշում է Փետրվարի 6-ը:

² Տե՛ս Գր. Զաղեթյան, Անդրկովկասյան կոմիսարիատի բռնները, Հ.Ս.Խ.Հ. Պետական Համալսարանի գիտական տեղեկագիր, թիվ 2-3, Յերեւան, 1927, էջ 350:

որ չէր, որը կարող էր ծածկել Անդրկովկասի և դեռևս այնտեղ տեղակայված բանակային զորամասերի պահանջները: «Հիմա թողարկվում է 1 մլն. ռուբլի,- նշում էր Խ. Կարճիկյանը,- և եթե նկատի ունենանք որ, ոչ թե Անդրկովկասի, այլ միայն Թիֆլիս քաղաքի պահանջները գերազանցում են 2 միլիոնը ու նաև այն, որ ֆինանսական առումով դեռևս չի լիկվիդացվել Անդրկովկասյան բանակը, ապա կհասկանանք թե ինչպիսի ճգնաժամի մեջ է գտնվում այսօր Անդրկովկասը»¹:

Նա անհանգստանում էր, որ մինչ այժմ չի հաջողվել ամրացնել գավառական գանձարկղները, դեռևս ոչ մի թղթադրամ չի ուղարկվել գավառ, որ սկսած փետրվարի 6-ից՝ բռնների ամբողջ թողարկմանը խժռել է միայն Թիֆլիսը և վերջապես, ինչպես պետք է վարվել բանակի ծախսերը հոգալու հարցում, պետք է վճարել, թե՞ ոչ²:

Մինչև անդրկովկասյան հանրապետությունների առաջացումը, հետագա պատկերը այսպիսին էր: Մարտին արդեն ստեղծվել էր 5% լազ՝ բռնների և կրեդիտկանների (վարկատոմս) մեջ, իսկ Անդրկովկասի անկախության հայտարարման հաջորդ օրը, ապրիլի 10 (23)-ին լազը բարձրացավ մինչև 15%³: Մեկ օրվա ընթացքում բռնների կուրսի այսպիսի զգալի անկումը բխում էր գերազանցապես քաղաքական պատճառներից: Գր. Ջաղեթյանի վկայությամբ ապրիլի սկզբին սպառվում էր 100 մլն ռուբլու էմիսիայի իրավունքը, մինչդեռ Սեյմն իր հարաճուն կարիքները հոգալու համար ապրում էր դժվարին կացություն: Մի կողմից կառավարական ապարատի պահպանման ծախքերը և մյուս կողմից՝ ռազմաճակատից հեռացող ռուսական զորամասերի պահանջները, անելանելի դրության մեջ էին դրել Սեյմին: Միակ ելքը նոր էմիսիան էր և ապրիլի 4-ին Կոմիսարիատը Սեյմի հաստատմանը ներկայացրեց օրինագիծ, ըստ որի ֆինանսների Կոմիսարիատին թույլ տրվեց նախկին հիմունքներով բաց թողնել 200 մլն ռուբլու բռններ:

1918 թ. մայիսի 2-ին Սեյմի 26-րդ նիստում, օրակարգի յոթ հարցերից չորսը նվիրված էին ֆինանսական հատկացումների խնդիրներին: Այս-

¹ Տե՛ս Закавказский Сейм, Заседание 9-ое, 22 февраля, с. 11-12.

² Տե՛ս նույն տեղում, էջ 13:

* Տնտեսական ցուցանիշ, որը բնութագրում է երկու փոխկապակցված տնտեսական երևույթների միջև առկա ժամանակային ինտերվալը:

³ Տե՛ս Գր. Ջաղեթյան, նույն տեղում, էջ 355:

պես, լավում են ֆինանսա-բյուջետային հանձնաժողովի զեկույցները. ա) ֆինանսների նախարարությանը 200 մլն. ռուբլի արժողությամբ բռներ տրամադրելու վերաբերյալ օրինագծի մասին (զեկ.՝ Հ. Յաղջյան), բ) Կարսի և Բաթումի շրջանների գաղթականներին օգնություն ցուցաբերելու նպատակով խնամատարության նախարարի տրամադրության տակ 10 մլն ռուբլի դնելու օրինագծի մասին (զեկ.՝ Ար. Ջուրաբյան), գ) Արտակարգ ընթացիկ ծախսերը փակելու նպատակով ստեղծվող հիմնադրամին աջակցելու համար՝ Անդրկովկասի կառավարությանը 10 մլն. ռուբլի հատկացնելու օրինագծի մասին (զեկ.՝ Հ. Յաղջյան) և դ) 1917 թ. ընթացքում Հաղորդակցության ուղիների գծով նախարարության հաստատությունների գերաժախսերը ծածկելու վերաբերյալ օրինագծի մասին (զեկ.՝ Սմիռնով)՝

Սեյմը յուրացնելով օրենսդրական իրավունքներ, բնականաբար բացում էր նոր վարկեր, որով և խախտվում էին բռների էմիսիայի նախկին իրավական հիմունքները: Ինքնըստինքյան պարզ էր նաև, որ Անդրկովկասի անկախացման ակտը հայտարարելուց հետո վերանում էր նաև այն ձևական հիմնավորումը, որը տրվել էր բռների առաջին էմիսիային. այլևս բռները դադարում էին ռուսական դրամանիշների «ժամանակավոր փոխարինողը» լինելուց և վերաճվում էին սոսկ տեղական թղթադրամների՝ այն էլ ենթակա ներքին դրամական շրջանառությունը ղեկավարող տնտեսական գործոններին²:

Գր. Ջաղեթյանն այս կապակցությամբ հիշում էր, որ Թիֆլիսի ամերիկյան հյուպատոսը, թուրքական արշավանքը կանխելու և Անդրկովկասի դիմադրական ուժը պահպանելու նպատակով, ֆինանսների կոմիսար Խ. Կարճիկյանին առաջարկել էր 650 հազար ֆունտ ստերլինգ (չեկերով)՝ ռազմաճակատի պահպանման ծախքերը հոգալու համար և բացի այդ՝ համապատասխան ակտով ապահովել բռների նոր էմիսիան, հաշվելով մեկ ֆունտ ստերլինգը հավասար 40 բոն-ռուբլիների: Բանակցությունները դրական արդյունք չունեցան՝ սրընթաց փոփոխվող քաղաքական հանգամանքների հետևանքով:

Սեյմի լուծարման և Վրաստանի անկախության հայտարարման օրը (26 մայիսի 1918 թ.) բաց թողնված բռների ընդհանուր գումարը հասնում էր 195 մլն. ռուբլու, որից 100 մլն. առաջին էմիսիայի, իսկ 95

¹ Տե՛ս Закавказский Сейм, Заседание 26-ое, 2-ого мая, с. 1-2.

² Տե՛ս Գր. Ջաղեթյան, նույն տեղում, էջ 355:

մլն. երկրորդ էմիսիայի հաշվից: Այսպիսով, ըստ Գր. Ջաղեթյանի, Սեյմի թույլատրած էմիսիոն իրավունքի չօգտագործված գումարը առ 26-ը մայիսի կազմում էր 105 մլն. ռուբլի:

Թիֆլիսում գտնվող բոլոր Անդրկովկասյան հիմնարկությունները, դրանց թվում նաև բռնների տպագրության էքսպեդիցիան, անցան վրացական կառավարության ձեռքը: Այս հանգամանքը հնարավորություն տվեց վերջինիս շարունակել բռնների անարգել տպագրությունը իր սեփական կարիքների համար: Վրաստանի կառավարությունը մինչև 1918 թ. հուլիսի սկիզբը ամբողջովին օգտագործեց Սեյմի թույլատրած էմիսիայի մնացորդը, Հայոց ազգային խորհրդին այդ գումարից տալով ընդամենը 9 մլն. ռուբլի: Վրացական կառավարության այս քայլը ևս, հասկանալի է, առիթ տվեց խիստ բողոքների, գլխավորապես Ադրբեջանի ներկայացուցչի կողմից: Վրացական կառավարությունն իր վարմունքն արդարացնում էր նրանով, որ նա հարկադրված էր բավարարել ռազմաճակատի լիկվիդացիայի ծախքերը, քանի որ բոլոր զորամասերն իրենց պահանջները ներկայացնում էին Կովկասի նախկին մայրաքաղաքում գրտնվող իշխանությանը: Այս առարկությունը թեև լուրջ քննադատության չէր դիմանում, բայց և այնպես Ադրբեջանն ու Հայաստանը կանգնած լինելով կատարված փաստի առջև, ստիպված էին այս խնդիրը կապել բռնների հետագա տպագրության հարցի հետ¹:

Ապրիլի **10 (23)**-ին Սեյմի **24**-րդ փակ նիստը լսում է զինվորական հանձնաժողովի զեկույցը՝ Անդրկովկասի զինվորական վարչակարգի վերակազմավորման օրինագծի մասին:

Զեկույցով հանդես է գալիս Սեյմի անդամ Ս. Փիրումյանը*: Նա կարևորում է ելակետային երկու սկզբունք ա) հաստատել, որ զինվորական վարչակարգի իշխանությունը պետք է հնարավորինս կենտրոնացվի մեկ մարմնի ձեռքում, քանի որ առանց մենիշխանության սկզբունքի հնարավոր չէ զինական ուժը համարել հուսալի և բ) պարզել, թե ով է հանդիսանում գերագույն իշխանության մարմինը²:

Բացի գլխավոր՝ ռազմական իշխանությանը կենտրոնացնելու հիմ-

¹ Տե՛ս Գր. Ջաղեթյան, նույն տեղում, էջ 356:

* Անվան բացակայության պատճառով ենթադրում ենք, որ Փիրումյանը մենշևիկ-ինտերնացիոնալիստ Սիմոնիկ Փիրումյանն է:

² Տե՛ս նույն տեղում, 24-րդ նիստ, էջ 1-2:

նահարցից, առաջնային էր համարվում այդ հզոր ու միաժամանակ ուճացված համակարգի կրճատման սկզբունքը: Ս. Փիրումյանի կարծիքով, թիկունքի հսկայական ապարատը, որը ձևավորվել էր երեք զինվորական վարչությունների՝ ռազմաճակատի, բանակի և օկրուգի գլխավոր հրամանատարից ու համապատասխանաբար՝ մատակարարման երեք կենտրոնական մարմիններից, առաջ էր բերել ոչ միայն համակարգի ավիրումը, այլև դարձել էր լուրջ վեճերի առիթ այն մասին, թե այս կամ այն հաստատությունները ում ենթակայության տակ են գտնվելու: Նա գրտնում էր, օկրուգի և ռազմաճակատի հասկացությունները վաղուց տարալուծվել են և գործող ապարատը միայն վիթխարի նյութական բեռ է դարձել Անդրկովկասի բյուջեի համար: Կրճատումների ընթացքում հնարավորություն էր ընձեռնվել տնտեսել 17 մլն. ռուբլի:

Հանձնաժողովը առաջարկում էր ստեղծել զինվորական օրենսդիր մարմին՝ գլխավոր հրամանատարի պաշտոնի փոխարեն: Ընդգծվում էր, որ գերագույն գլխավոր հրամանատարը անկախ էր կառավարական մարմիններից:

Անդրկովկասյան բանակի վերջնական ձևավորման նպատակ էր համարվում բանակի ժողովրդավարացումը, տվյալ դեպքում անցումը զինվորական միլիցիայի ինստիտուտին:

Ս. Փիրումյանի գեկույցից հետո, նիստի նախագահ Ն. Չխեիձեն ընթերցում է Անդրկովկասի զինվորական վարչակարգի կառուցվածքի մասին կանոնադրությունը, որն ընդունվել էր Անդրկովկասյան սեյմի զինվորական հանձնաժողովի կողմից:

Հոդ. 1. Անդրկովկասի զինվորական ուժի նկատմամբ գերագույն մարմին է համարվում Սեյմը, որը զինվորական իշխանությունն իրականացնում է Անդրկովկասյան կառավարության միջոցով:

Հոդ. 2. Անդրկովկասյան Սեյմի գործադիր մարմին է համարվում Անդրկովկասյան կառավարությունը, որը զինուժի նկատմամբ իր իշխանությունն իրականացնում է ռազմական նախարարության միջոցով՝ զինվորական նախարարի գլխավորությամբ:

Հոդ. 3. Պատերազմական ժամանակ, հակառակորդի դեմ գործող բոլոր ռազմական ուժերին գլխավորում է Անդրկովկասի կառավարության հատուկ հրովարտակով նշանակված բանակի հրամանատարը, որը անմիջականորեն ենթարկվում է Անդրկովկասյան կառավարությանը:

Հոդ. 4. Ռազմական նախարարությունում է կենտրոնացվում զին-

վորական վարչության բոլոր բնագավառների ղեկավարումը:

Հոդ. 5. Ռազմական նախարարությունը, խաղաղ ժամանակ կազմում են

ա) զինվորական նախարարը, բ) զինվորական նախարարի օգնականը, գ) Անդրկովկասի ռազմական խորհուրդը, դ) Կովկասյան բանակի շտաբը, ե) ռազմա-տեխնիկական մասի վարիչը, զ) հրետանային մասի պետը, է) ռազմական նախարարության գրասենյակը և ը) ռազմական նախարարությանը կից քարտուղարությունը¹:

Ուշագրավ է, որ Անդրկովկասի անկախ հանրապետության հոչակման հաջորդ օրը, ապրիլի 10-ին, առերես փոքր ու ոչ էական, սակայն հիմքում կարևորագույն հարցի քննարկումը սկսվում է Գ. Ռասուլ-Չադեի և Ն. Ժորդանիայի համերաշխ հնչող դիտողության քննարկումից: Երկուսն էլ առաջարկում էին «Կովկասյան բանակ», «Կովկասյան բանակի շտաբ» հասկացությունները փոխարինելու «Անդրկովկասյան» ելույթով: Դա կատարվում էր ոչ միայն ու ոչ այնքան նրանով, որ Հյուսիսային Կովկասի ենթակա զորամասերը դուրս էին եկել շտաբի ենթակայությունից, այլ առավելապես նրանով, որ այդ զորամասերի մեծ մասը բուլղարացի էին ու բացի չենթարկվելուց վերածվել էին քաղաքական ու ռազմական հակառակորդի:

Երկարատև ու մասնագիտական քննարկումից հետո որոշվում է, որ նոր ու լրամշակված նախագիծը նորից կներկայացվի զինվորական հանձնաժողովին²:

Ապրիլի 17-ի Սեյմի նիստը ստացավ «Անդրկովկասյան Սեյմի անդամների մասնավոր խորհրդակցություն» անվանումը: Նախագահում էր Ն. Չխեիձեն, մասնակցում էր 46 անդամ:

Խորհրդակցությունը նվիրվեց Սեյմի անդամների հանձնաժողովային աշխատանքի պայմաններին և հարկադիր բնույթի միջոցառումների մշակմանը՝ աշխատանքների կարգավորման նպատակով³:

Սեյմի գրասենյակի պետ Յու. Շումախերի զեկույցից պարզվում է, որ ընտրված 15 հանձնաժողովներից աշխատանքն ավարտել է միայն մեկ հանձնաժողովը: Մնացած 14 հանձնաժողովներից աշխատում էին 6-ը -

¹ Տե՛ս **НАГ** (Национальный архив Грузии), ф. 2, оп. 1, д. 141 նաև՝ Закавказский Сейм, Заседание 24, с. 4-5:

² Տե՛ս Закавказский Сейм, նույն տեղում, էջ 17-18:

³ Տե՛ս **НАГ**, ф. 2, оп. 1, д. 5, л. 1.

Մանդատային, Տնտեսական - կարգադրիչ, Ագրարային և Այլքաղաքային (Иногородная) Ռազմական, ֆինանսա-բյուջետային, իրավաբանական, ռեզլամենտի մշակման: Ըստ Յու. Շումախերի՝ Ազգային, Պարենային, Բանվորական և Գրադարանային հանձնաժողովները ոչ մի անգամ չեն հավաքվել և չեն աշխատել:

Ռազմական հանձնաժողովի նախագահ Ն. Ժորդանիան վրդովեցուցիչ գտնելով իրենց պարտականությունների նկատմամբ հանձնաժողովների անդամների վերաբերմունքը, առաջարկում է նրանց նկատմամբ կիրառել ռեպրեսիվ քայլեր, ընդհուպ մինչև Սեյմի անդամի կողմից զրկելը: Ն. Չխեիձեն իր հերթին առաջարկում է Սեյմի բացակա անդամներին տուգանել 50 ռուբլու չափով, եթե վերջիններս երեքօրյա ժամկետում չներկայացնեն բացակայության վերաբերյալ հարգելի պատճառ: Նրա առաջարկն էլ ընդունվում է 21 կողմ և 18 դեմ ձայներով: Այսպիսով, իր գործունեության չորս ամիսների ընթացքում Անդրկովկասյան Սեյմը փորձեց կյանքի կոչել օրենսդրական մի շարք նախաձեռնություններ, որոնց հիմնական նպատակը երկրամասի ժողովրդավարական զարգացման շարունակության ապահովումն էր և Խորհրդային իշխանությանը հակադրվելու հանգամանքը:

***Բանալի բառեր.** Անդրկովկասյան կոմիսարիատ, Սեյմ, Հողային օրենք, անդրկովկասյան բոներ, Դ. Օնիաշվիլի, Գ. Ջաղեթյան, Հ. Յաղջյան, Ս. Փիրումյան, Ն. Չխեիձե, Յու. Շումախեր:*

ЗАКОНОДАТЕЛЬНАЯ ДЕЯТЕЛЬНОСТЬ ЗАКАВКАЗСКОГО СЕЙМА (ФЕВРАЛЬ – МАЙ 1918 Г.)

Ваан Меликян

***Ключевые слова** - Закавказский комиссариат, Сейм, земельный закон, закавказские боны, Д. Ониашвили, Г. Джагетян, О. Ягджян, С. Пирумян, Н. Чхеидзе, Ю. Шумахер*

Непризнавшую Советскую власть Закавказский Сейм в период февраль-май месяцы 1918 г. попытался осуществить ряд демократических реформ, в том числе и законодательную деятельность.

В этом контексте важными шагами являются: а) закон о земле от 15-го марта 1918 г., который преследовал цель дополнить и развить земельный устав

Комиссариата от 16-го декабря 1917 г., б) урегулирование финансового вопроса и внедрение единых денежных знаков и в) устав о реорганизации закавказской военной администрации.

LEGISLATIVE ACTIVITIES OF THE TRANSCAUCASIAN SEIM (PARLIAMENT) (FEBRUARY - MAY 1918)

Vahan Melikyan

Keywords - *Transcaucasian Commissariat, Seim, Land Law, Transcaucasian Bonds, D. Oniashvili, G. Dzhagetian, O. Yaghdjian, S. Pirumyan, N. Chkhenidze, Yu. Shumakher*

The Transcaucasian Seim which did not recognize the Soviet power, in the period from February to May 1918, tried to implement a number of democratic reforms, including legislative activity.

In this context, the important steps are: a) the land law from March 15, 1918, which aimed to supplement and develop the land charter of the Commissariat from December 16, 1917, b) the settlement of the financial issue and the implementation of common currency, and c) the charter on the reorganization of the Transcaucasian military administration.